ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում
_____Հայոց լեզվի և գրականության_____
ամբիոնի անվանումը
Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/
Արձանագրություն № __2__
«__12__» ___սեպտեմբեր__ 2023 թ.

ՀԼԳ/մ-045 «ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն

Կրթական ծրագիր՝ 011401.19.7 Հայոց լեզու և գրականություն

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության մագիստրոս

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականություն

Ուսուցման ձևը՝ Առկա

Կուրս/կիսամյակ 1-ին /1-ին

Դասախոս(ներ)՝ Գուրգեն Խաչատրյան
Լիլիթ Պետրոսյան

էլ. հասցե՝ gxachatryan@yahoo.com

lilitpetrosyano1977@mail.ru

Վանաձոր- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.

«Միջին հայերեն» առարկայի ուսումնական փաթեթը կազմված է մագիստրատուրայի հիմնական կրթական ծրագրով՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա: Այն նպատակաուղղված է մագիստրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը, մասնագիտական հիմնավոր գիտելիքների կուտակմանը:

«Միջին հայերեն» դասընթացը ապահովում է գիտաճյուղի նոր մոտեցումների ոգուն համապատասխանեցման գործընթացը, նպաստում է ուսանողի անհատական և ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, գիտելիքի հարստացմանը:

Դասընթացը ներառված է 011401.19.7 «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսումնական պլանում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

Դասընթացի նպատակն է.

- Միջին հայերենի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- Դասընթացի շրջանակներում միջին հայերենի հնչյունական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական համակարգերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում ուսանողների կողմից:
- Միջինհայերենյան տեքստերը վերլուծելու, հնչյունական, բառագիտական և քերականական առանձնահատկությունները վերհանելու կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:

Դասընթացի խնդիրներնեն՝

- Սովորեցնել ուսանողներին դասընթացի ՛ լեզվաբանական-տեսական, կիրառական-գործնական նշանակությունը:
- Բացատրել ուսանողներին միջին հայերենի հնչյունական, բառագիտական, քերականականհամակարգերի առանձնահատկությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«Միջին հայերենի տեսություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը 011401.19.1 «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Գրաբար, 1, 2, 3», «Հայոց լեզվի պատմություն» և «Բարբառագիտություն» դասընթացներից:

4.Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և կոմպետենցիաները.

«Միջին հայերեն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողից ակնկալվող վերջնարդյունքներն են.

Իմանա՝

Միջին հայերենի քերականական մի շարք համակարգերի պատմական զարգացման նախադրյալները:

Կարողանա՝

Ընթերցել, վերլուծել մեկնաբանել միջին հայերենով գրված մատենագրությունը:

Տիրապետի՝

Միջին հայերենի հնչյունաբանության, բառագիտության և քերականության հիմնական հասկացություններին, հայոց լեզվի զարգացման պատմության պարբերացմանը, այդ մասին եղած կարծիքների քննադատական վերլուծությանը, ծանոթ լինի միջին հայերենի հնչյունական, բառագիտական և քերականական կարևորագույն առանձնահատկություններին:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,
ՄՁԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
ՈՒԿ4 առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում՝ ըստ աշխատաշուկայի պահանջների.

Շրջանավարտը «Միջին հայերեն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կարող է կիրառել ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություններ կատարելունպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքիտեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**4 կրեդիտ// 120 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	24
Գործնական աշխատանք	**24**
Ինքնուրույն աշխատանք	**72**
Ընդամենը	120
Ստուգման ձևը՝	2 ընթացիկ գրավոր քննություն

7. Ուսումնական աշխատանքների տեսակները.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց տրամաբանական և ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը ևս պետք է լինի դասախոսության գործընթացի ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի որոշակի մանակցություն ցուցաբերի ուսումնական գործընթացին:
- Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների,

գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- Ինքնուրույն աշխատանքը ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

- Ռեֆերատ – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):

8. Դասավանդման մեթոդներներն են՝

հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում,գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, համեմատման և համակարգման գծապատկերների կազմում, ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների նթեմաների[1].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբոր.աշխ.	Ինքնուրույն աշխատանք
1.	Գրական միջին հայերենը որպես գրական հայերենի առանձին ենթաշրջան: Միջին հայերենի պարբերացումը: Միջինհայերենյան սկզբնաղբյուրները:	2		2		6
2.	Միջին հայերենի հնչյունական համակարգը:	2		2		6
3.	Միջին հայերենի բառային կազմը:	2		2		5
4.	Միջին հայերենի անվանական հոլովման համակարգը: Հոլովման քերականական կարգը:	4		4		10
5.	Միջին հայերենի հոլովի, թվի և առկայացման քերականական կարգերը:	2		2		5
6.	Ածականը և թվականը միջին հայերենում: Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը: Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը:	2		2		8

[1] Նման է օրացուցային պլանին

7.	Միջին հայերենի անդեմ բայերի համակարգը:	2		2		8
8.	Միջին հայերենի խոնարհման համակարգը: Դրական և ժխտական խոնարհումներ:Համադրական, վերլուծականնկրկնաբաղադրյալժամանակաձևեր: Անկանոնևպակասավորբայեր:Միջին հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացումը:	2		2		8
9.	Շարահյուսական կապակցությունների բաղադրիչների կապակցման եղանակներն ու միջոցները միջին հայերենում:	2		2		8
10.	Միջին հայերենի պարզ նախադասության ընդհանուր բնութագիրը(երկկազմ և միակազմնախադասություններ):	2		2		4
11.	Միջին հայերենի բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը:Միջին հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացումը:	2		2		8
ԸՆԴԱՄԵՆԸ		24		24		72

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	**Անվանումը/հեղինակ**	**Հրատարակության տարի**
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս	**1940**
2.	Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս	1951
3.	Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն	1981
4.	Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը	1969
5.	Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության, հ. Ա.	1972
6.	Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության, հ. Բ.	1976
7.	Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը	1953
8.	Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան	1992
9.	Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի	1866
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն	1965
2.	Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ	1976

3.	Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների	1952-1971
4.	Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դդ.	1979
5.	Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն	1961
6.	Գ. Խաչատրյան, Գրաբար	2016

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

1.1.Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	**Թեմա**	**Ուսումնասիրվող հարցեր**	**Ժամաքանակ**	**Գրականություն**[2]
1.	Ներածություն: Հոլովի քերականական կարգը	Միջին հայերենը որպես 11-17-րդ դարերի հայ լեզվամտածողության լեզու: Գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար եզրույթները: Միջին հայերենով գրված գրականության ճանաչողական դերը: Հոլովի քերականական կարգը: Հոլովիչներ: Հոլովակերտներ:	6	**ՊԳ 1,4** **ԼԳ 2, 7**

[2] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

2.	Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը	Անվանական հոլովման համակարգը: Թվի քերականական կարգը: Հոլովիչներ: Հոլովակերտներ:	6	**ՊԳ 2, 4** **ԼԳ 7**
3.	Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը:	Դերանուններ. տեսակները: Դերանվանական հոլովման առանձնահատ-կությունները (դերանվանա-կան հոլովիչներ և հոլովակերտներ, հիմքի լրիվ և մասնակի փոփոխություն): Դերանունների թվի քերականական կարգի առանձնահատկությունները: Միջին հայերենի դերանունների իմաստաբանական առանձնահատկությունները և կիրառությունները խոսքում:	5	**ՊԳ,2,3**
4.	Միջին հայերենի բայը և խոնարհման համակարգը:	Դիմավոր բայեր: Անդեմ բայեր: Բայահիմքեր, դիմաթվային վերջավորություններ: Ականոնություններ:	7	**ՊԳ 1, 4**

Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

հհ/հ	**Թեմա**	**Ուսումնասիրվող հարցեր**	**Ժամաքանակ**	**Ստուգման ձևը**	**Գրականություն**
1.	Հայոց լեզվի զարգացման փուլերը: Միջին հայերենի հնչյունային,	1. Հին հայերեն, միջին հայերեն, արդի հայոց լեզու եզրույթները 2.Պատմական, համեմատական լեզվաբանական դպրոցներ:	**1**	**Բանավոր հարցում, 20 հարց պարունակող թեստ:**	**ՊԳ 1, 4** ԼԳ 1

	քերականական առանձնահատկություն ները	3.Միջին հայերենի քերականագիտությունը: 4.Հնչյունաբանություն. միջին հայերենի ուղղագրությունն ու ուղղախոսությունը 5.Միջին հայերենի ձևույթաբանական կազմը:			
2.	Միջին հայերենի անվանա-կան հոլովման համակարգը	1.Կցական և թեքական փոփոխությունների առանձնահատկությունները: 2.Հոգնակիակերտ վերջավորություններ: 3.Հոլովիչներ և հոլովակերտներ 4. Վերջադրական և ներդրական հոլովումներ:	1	**Բանավոր հարցում:** **Թիմային աշխատանք:**	**ՊԳ 1, 4** ԼԳ 1
3.	Ուղղական հոլովը միջին հայերենում	1.Ուղղական հոլովը եզակի և հոգնակի թվերում: 2.Նախադասության անդամներ, որոնք արտահայտվում են ուղղական հոլովով:	1	**Բանավոր հարցում, թիմային աշխատանք:**	**ՊԳ 1,2** **ԼԳ 5, 6**
4.	Հայցական հոլովը միջին հայերենում	1.Հայցական հոլովը եզակի և հոգնակի թվերում: 2.Նախադասության անդամներ, որոնք արտահայտվում են հայցական հոլովով	1	**Բնագրերի գրավոր վերլուծություն**	**ՊԳ 2, 4** **ԼԳ 2, 7**
5.	Սեռական-տրական հոլովաձև	1.Սեռական-տրական հոլովը եզակի և հոգնակի թվերում: 2. Արտաքին հոլովումներ: 3.Ներքին հոլովումներ: 4.Սեռական-տրական հոլովով դրված բառերի հարցադրումները: 5.Նախադասության անդամներ, որոն արտահայտվում են սեռական-տրական հոլովով:	1	**Թիմային աշխատանք-մրցույթ** Գրի առած վերլուծության ներկայացում:	**ՊԳ 1, 2** **ԼԳ 5, 7**
6.	Բացառական հոլովի արտահայտությունը միջին հայերենում	1.Բացառական հոլովը եզակի և հոգնակի թվերում: 2.Նախադասության անդամներ, որոնք արտահայտվում են բացառական հոլովով:	1	**Բանավոր հարցում:** **Թեստային ստուգում:**	**ՀԳ 1, 3** **ԼԳ 2, 6, 7**
7.	Գործիական հոլովի արտահայտությունը միջին	1.Գործիական հոլովը եզակի և հոգնակի թվերում: 2.Նախադասության անդամներ, որոնք	1	**Բանավոր ստուգում:** **Համեմատական քննություն:**	**ՀԳ 2, 3** **ԼԳ 2, 6, 7**

	հայերենում	արտահայտվում են գործիական հոլովով			
8.	Ներգոյական հոլովի արտահայ-տությունը միջին հայերենում	1.Ներգոյական հոլովը եզակի և հոգնակի թվերում: 2.Ներգոյական հոլովով դրված բառերի հարցադրումները: 3.Նախադասության անդամներ, որոնք արտահայտվում են ներգոյական հոլովով:	1	**Բանավոր հարցում: Թեստային ստուգում:**	**ՀԳ 1, 3 ԼԳ 2, 6, 7**
9.	Անվանական հոլովումը միջին հայերենում	1.Հոլովաձևերի ընդհանուր առանձնահատկությունները: 2.Անկանոն կամ զարտուղի հոլովումների առանձնահատկությունները: 3.Գոյականների արտահայտությունը միջին հայերենյան բնագրերում:	1	**Բանավոր ստուգում: Համեմատական քննություն:**	**ՀԳ 2, 3 ԼԳ 2, 6, 7**
10.	Առկայացման քերականական կարգը միջին հայերենում	1.Ցուցականության իմաստը միջին հայերենում: 2.Դիմորոշության իմաստը միջին հայերենում: 3.Ստացականության իմաստը միջին հայերենում: 4.Որոշյալության իմաստը միջին հայերենում: 5.Հոդերի դիրքային առանձնահատկությունները:	1	**Թեստային աշխատանք. Պատասխանել տրված հարցերին:**	**ՊԳ 2,4 ԼԳ 1, 2, 7**
11.	Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը	1.Գրաբարի և միջին հայերենի հոլովման համակարգերի նմանություններն ու տարբերությունները: 2.Միջին հայերենի և արևելահայերենի հոլովման համակարգերի նմանություններն ու տարբերությունները: 3.Միջին հայերենի և արևմտահայերենի հոլովման համակարգերի նմանություններն ու տարբերությունները:	2	**Հոլովել տրված բառերը: Բնագրերում որոշել գոյականների հոլովաձևերը:**	**ՊԳ 3,4 ԼԳ 5, 6**
12.	Անձնական և փոխադարձ դերանուններ	1.Անձնական դերանունների հոլովումը: 2.Անձնական դերանունների կիրառությունը բնագրերում: 3.Փոխադարձ դերանունների հոլովումը: 4.Փոխադարձ դերանունների կիրառությունը	1	**Հոլովել դերանունները: Բերել անձնական և փոխադարձ դերանուններով բնագրային օրինակներ և ներկայացնել ձևաբանական**	**ՊԳ1,2 ԼԳ 1,2,**

		բնագրերում:		**առանձնահատկությունները:**	
13.	Ցուցական և ստացական դերանուններ	1.Ցուցական դերանունների հոլովումը: 2.Ցուցական դերանունների կիրառությունը բնագրերում: 3.Ստացական դերանունների հոլովումը: 4.Ստացական դերանունների կիրառությունը բնագրերում:	1	**Բերել ցուցական և ստացական դերանուններով բնագրային օրինակներ և ներկայացնել ձևաբանական առանձնահատկությունները:**	**ՊԳ 2,3 ԼԳ 4,5**
14.	Անորոշ և որոշյալ դերանուններ	1.Անորոշ դերանունների հոլովումը: 2.Անորոշ դերանունների կիրառությունը բնագրերում: 3.Որոշյալ դերանունների հոլովումը: 4.Որոշյալ դերանունների կիրառությունը բնագրերում:	1	**Բերել անորոշ և որոշյալ դերանուններով բնագրային օրինակներ և ներկայացնել ձևաբանական առանձնահատկությունները:**	**ՊԳ 3,4 ԼԳ 4, 6**
15.	Հարցական և հարաբերական դերանուններ	1.Հարցական դերանունների հոլովումը: 2.Հարցական դերանունների կիրառությունը բնագրերում: 3.Հարաբերական դերանունների հոլովումը: 4.Հարաբերական դերանունների կիրառությունը բնագրերում:	1	**Բերել հարցական և հարաբերական դերանուններով բնագրային օրինակներ և ներկայացնել ձևաբանական առանձնահատկությունները:**	**ՊԳ 2,3 ԼԳ 3,5**
16.	Անդեմ բայերի համակարգը	1.Միջին հայերենի անկախ դերբայները: 2.Անկախ դերբայների հոլովման առանձնահատկությունները: 3.Կախյալ դերբայների շարահյուսական առանձնահատկությունները: 1.Անորոշի հիմքից կազմվող դերբայները: 2. Կատարյալի հիմքից կազմվող դերբայները: 3.Անկախ դերբայների կիրառությունը խոսքում: 4.Կախյալ դերբայների կիրառությունը խոսքում:	1	**Տեսական գրականության ուսումնասիրություն: Բնագրային օրինակների վերլուծություն:**	**ՊԳ 1,4 ԼԳ 1,5**
17.	Դիմավոր բայեր կամ խոնարհման համակարգ	1.Եղանակի քերականական կարգի առանձնահատկությունները: 2.Ժամանակի քերականական կարգի	**2**	**Կատարել ձևաբանա-կան վերլուծություն: Դիմավոր բայերը դարձնել**	**ՊԳ 1,2, 3, 4 ԼԳ 3,4, 6, 7**

		առանձնահատկությունները: 3. Ներկայի հիմքից կազմվող ժամանակաձևեր: 4.Կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևեր: 1.Դիմաթվային վերջավորությունների առանձնահատկությունները: 2. Պարզ ժամանակաձևերի կիրառությունը: 3. Ներգործական սեռի բայերի խոնարհումը: 4.Կրավորական սեռի բայերի խոնարհումը: Չեզոք սեռի բայերի խոնարհման առանձնահատկությունները:		**անդեմ և հակառակը: Խոնարհել տրված բայերը համապատասխան եղանակաժամանակային ձևերով: Կատարել բնագրային վերլուծություններ:**	
18.	Վերլուծական ժամանակաձևերը: Կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը:	1.Միջին հայերենի օժանդակ բայերը և նրանց կիրառություններ: 2.Բաղադրյալ ժամանակաձևերի կիրառության առանձնահատկությունները: 3.Բաղադրյալ ժամանակաձևերի արտահայտությունները հայերենի զարգացման տարբեր շրջաններում: 1.Կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի կիրառությունը: 2.Կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի կազմության առանձնահատկությունները: 3.Կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի համեմատական բնութագիրը հայերենի զարգացման տարբեր շրջաններում:	**1**	**Բնագրում գտնել վերլուծական ժամանակաձևերը, ներկայացնել դրանց ձևաբանական կաղապարները և աշխարհաբար համարժեքները:**	**ՊԳ 2, 3,4 ԼԳ 1, 2**
19.	Անկանոն և պակասավոր բայեր	1.Տարարմատ հիմքով անկանոն բայեր 2. Համարմատ հիմքով անկանոն բայեր 3.Անկանոն բայերի կանոնավոր ձևերը 4.Անկանոն բայերը հայերենի զարգացման տարբեր շրջաններում 5.Անկանոն բայերի արտահայտությունը հայերենի զարգացման տարբեր շրջաններում 1.Պակասավոր բայերի խոնարհումը	**2**	**Բառարանային աշխատանք: Ձևաբանական վերլուծություն**	**ՊԳ 1,4 ԼԳ 5,6, 7**

		2.Անկանոն բայերի բացակա ձևերի արտահայտության եղանակները 3.Պակասավոր բայերի կիրառությունը հայերենի զարգացման տարբեր շրջաններում 4.Պակասավոր բայերի կիրառությունը միջին հայերենյան գրականության մեջ			
20.	Խոնարհման համարգը միջին հայերենում	1.Գիտելիքների ամփոփում ա. Անդեմ բայերի կիրառություններ բ. Դիմավոր բայերի կիրառություններ	**2**	**Ռեֆերատների ներկայացում: Ամփոփում**	**ՊԳ 1, 2, 3, 4 ԼԳ 1, 2, 3, 4, 5, 6, 7**

Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	**Ինքնուրույն աշխատանքի թեմաները**	**Ուսումնասիրվող հարցեր**	**Աշխատանքի տեսակը**	**Ներկայացման ժամկետները**	**Ստուգման ձևը**	**Գրականություն**
1.	Բնագրի ընթերցանություն և վերլուծություն	Ընթերցանություն, լեզվական միավորների համեմատություն	Գրավոր վերլուծություն	Ուսումնառության ընթացքում	Քննարկում և գնահատում	ՊԳ 1, 2, 3, 4 ԼԳ 1, 2, 3, 4, 5, 6, 7
2.	Բնագրի ընթերցանություն և թարգմանություն	Ընթերցանություն, լեզվական միավորների թարգմանություն՝ միջին հայերեն – աշխարահաբար գրական անցումով	Գրավոր վերլուծություն	Ուսումնառության ընթացքում	Քննարկում և գնահատում	ՊԳ 1, 2, 3, 4 ԼԳ 1, 2, 3, 4, 5, 6, 7
3.	Բնագրի լեզվաբանական քննություն	Լեզվական միավորների քննություն	Գրավոր վերլուծություն	Ուսումնառության ընթացքում	Քննարկում և գնահատում	ՊԳ 1, 2, 3, 4 ԼԳ 1, 2, 3, 4, 5, 6, 7
4.	Բնագրերի միջգիտակարգային քննություն	Գիտական երկերի բառապաշարի և բովանդակության քննություն	Գրավոր վերլուծություն	Ուսումնառության ընթացքում	Քննարկում և գնահատում	ՊԳ 1, 2, 3, 4 ԼԳ 1, 2, 3, 4, 5, 6, 7

5.	Բառապաշարային տեղաշարժերի քննություն	Նորաբանությունների և հնաբանությունների համադրություն	Գրավոր վերլուծություն	Ուսումնառության ընթացքում	Քննարկում և գնահատում	ՊԳ 1, 2, 3, 4 ԼԳ 1, 2, 3, 4, 5, 6, 7

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[3]

Ռեսուրսի անվանումը	**Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)**
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Համակարգիչ, Էկրան, գրատախտակ
Համակարգչային ծրագրեր	MicrSooft Word

[3] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

14. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 ընթացիկ գրավոր քննությունների միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով: Գրավոր քննության հարցաթերթիկը կազմվում է տեսական հարցերից, ինչպես նաև գործնական վարժություններից:

Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Միջին հայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները:
2. Միջին հայերենի բառապաշարային տեղաշարժերը:
3. Միջին հայերենի անվանական հոլովման համակարգը:
4. Հոլովի, հոլովման քերականական կարգերը: Հոլովական վերջավորությունները:
5. Ուղղական հոլով:
6. Հայցական հոլով:
7. Սեռական–տրականհոլովաձև:
8. Բացառական հոլով:
9. Գործիական հոլով:
10. Ներգոյական հոլով:
11. Առկայացման քերականական կարգը միջին հայերենում:
12. Թվի քերականական կարգը միջին հայերենում:
13. Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը:
14. Ածականը միջին հայերենում:
15. Թվականը միջին հայերենում:
16. Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը:
17. Միջին հայերենի բայը և խոնարհման համակարգը:
18. Անդեմ բայերի համակարգը:
19. Միջին հայերենի բայի սեռի քերականական կարգը:
20. Դիմավոր բայեր կամ խոնարհման համակարգը:
21. Վերլուծական և կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը:
22. Անկանոն բայեր:
23. Պակասավոր բայեր:

<u>Ա. 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթների ընթացքում)</u>

Ընդգրկված թեմաները.

1. Գրական միջին հայերենը որպես գրական հայերենի առանձին ենթաշրջան: Միջին հայերենի պարբերացումը: Միջինհայերենյան սկզբնաղբյուրները:
2. Միջին հայերենի հնչյունական համակարգը:
3. Միջին հայերենի բառային կազմը:
4. Միջինհայերենիանվանականհոլովմանհամակարգը:

Հոլովմանքերականականկարգը:

5. Միջինհայերենիհոլովի, թվինառկայացմանքերանականկարգերը:

6. Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը:
7. Ածականը և թվականը միջին հայերենում:

Ընդգրկված հարցեր.

1. Միջին հայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները:
2. Միջին հայերենի բառապաշարային տեղաշարժերը:
3. Միջին հայերենի անվանական հոլովման համակարգը:
4. Հոլովի, հոլովման քերականական կարգերը: Հոլովական վերջավորությունները:
5. Ուղղական հոլով:
6. Հայցական հոլով:
7. Սեռական–տրականհոլովաձև:
8. Բացառական հոլով:
9. Գործիական հոլով:
10. Ներգոյական հոլով:
11. Առկայացման քերականական կարգը միջին հայերենում:
12. Թվի քերականական կարգը միջին հայերենում:
13. Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը:
14. Ածականը միջին հայերենում:
15. Թվականը միջին հայերենում:

<u>Բ. 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթների ընթացքում)</u>

Ընդգրկվող թեմաները.

1 Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը:

2. Միջին հայերենի անդեմ բայերի համակարգը:

2 Միջին հայերենի խոնարհման համակարգը: Դրական և ժխտական խոնարհումներ: Համադրական, վերլուծական և կրկնաբաղադրյալ ժամանակաձևեր: Անկանոն և պակասավոր բայեր: Միջին հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացումը:

3 Շարահյուսական կապակցությունների բաղադրիչների կապակցման եղանակներն ու միջոցները միջին հայերենում:

4 Միջին հայերենի պարզ նախադասության ընդհանուր բնութագիրը (երկկազմ և միակազմ նախադասություններ):

5 Միջին հայերենի բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը:

Ընդգրկված հարցեր.

1. Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը:
2. Միջին հայերենի բայը և խոնարհման համակարգը:
3. Անդեմ բայերի համակարգը:

4. Միջին հայերենի բայի սեռի քերականական կարգը:
5. Դիմավոր բայեր կամ խոնարհման համակարգը:
6. Վերլուծական և կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը:
7. Անկանոն բայեր:
8. Պակասավոր բայեր:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ 011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն

Կրթական ծրագիր՝ 011401.19.7 Հայոց լեզու և գրականություն

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության մագիստրոս

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-045 «ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	48	Դասախոսություն	24
			Գործնական	24
	Ինքնուրույն	72		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	2 ընթացիկ գրավոր քննություն			
Դասընթացի նպատակը	• Միջին հայերենի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին: • Դասընթացի շրջանակներում միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում ուսանողների կողմից: • Միջինհայերենյան տեքստերը վերլուծելու, քերականական առանձնահատկությունները վերհանելու կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. **Իմանա՝** Միջին հայերենի քերականական մի շարք համակարգերի պատմական զարգացման նախադրյալները: **Կարողանա՝** Ընթերցել, վերլուծել մեկնաբանել միջին հայերենով գրված մատենագրությունը: **Տիրապետի՝** Միջին հայերենի հնչյունաբանության, բառագիտության և քերականության հիմնական հասկացություններին, հայոց լեզվի զարգացման պատմության պարբերացմանը, այդ մասին եղած կարծիքների քննադատական վերլուծությանը, ծանոթ լինի միջին հայերենի հնչյունական, բառագիտական և քերականական կարևորագույն առանձնահատկություններին:			

Դասընթացի բովանդակությունը	**Թեմա 1.** Գրական միջին հայերենը որպես գրական հայերենի առանձին ենթաշրջան: Միջին հայերենի պարբերացումը: Միջինհայերենյան սկզբնաղբյուրները: **Թեմա 2.** Միջին հայերենի հնչյունական համակարգը: **Թեմա 3.** Միջին հայերենի բառային կազմը: **Թեմա 4.** Միջինհայերենիանվանականհոլովմանհամակարգը: Հոլովմանքերականականկարգը: **Թեմա 5.** Միջինհայերենիհոլովի, թվիևառկայացմանքերականականկարգերը: **Թեմա 6.** Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 7.** Ածականը և թվականը միջին հայերենում: **Թեմա 8.** Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը: **Թեմա 9.** Միջին հայերենի անդեմ բայերի համակարգը: **Թեմա 10.** Միջին հայերենի խոնարհման համակարգը: Դրական և ժխտական խոնարհումներ: Համադրական, վերլուծական և կրկնաբաղադրյալ ժամանակաձևեր: Անկանոն և պակասավոր բայեր: Միջին հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 11.** Շարահյուսական կապակցությունների բաղադրիչների կապակցման եղանակներն ու միջոցները միջին հայերենում: **Թեմա 12.** Միջին հայերենի պարզ նախադասության ընդհանուր բնութագիրը (երկկազմ և միակազմ նախադասություններ): **Թեմա 13.** Միջին հայերենի բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը:

Գնահատման մեթոդները և չափանիշները	Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով: Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ: Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
Գրականություն	Պարտադիր գրականություն Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության, հ. Ա., Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության, հ. Բ., Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի Լրացուցիչ գրականություն Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների Ռ. Իշխանյան, Նոր գր. հայերենը 17-18-րդ դդ. Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն Գ. Խաչատրյան, Գրաբար